


ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ
 Պուլկարիոյ Համբր
 Տարեկան Ֆրբ. 10
 Վեցամսեայ " 5
 Արտասահման
 Տարեկան Ֆրբ. 12
 Վեցամսեայ " 6
 ԿԱՆԻՍԻԿ



Գրութիւնք եւ չին
 տրուիր:

Հասցէ
 DIRAN PAPAZIAN

RUE DRAGOMAN
 K. STEPAN
 BULGARIE) VARNA

ՇԱԲԱԹԱՅԱՆԴԵՍ. ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

Եթէ կ'ուզե՛ք «Հայեղի» ին մէջ աղոտ երեւնալ,

Պարսիք սիրուն եւ ազնիւ դէմք մը ունենալ:

ԱԶԳԱՅԻՆ

ՊԹԹՈՒՇԱՆԻ ՆԱԽՈՐԴ ԹԱՂ ԽՈՐՀՈՒՐԴ

Պօթուշանի հայ հասարակութիւնը դարավերջիկ կողոպուտի մը զոհ գացեր է: Այդ կողոպուտին մանրամասնութիւնը կը գտնենք Ռուսա՝ երէն լեզուով հրատարակուած գրքոյկի մը մէջ, որ Ռուսանիոյ ներքին գործոց նախարարութեան բացած քննութեան տեղեկագիրն է:

Ահաւասիկ ամօթալի պատմութեան համառօտութիւնը:

Պօթուշանի թաղ խորհուրդը կը բաղկանար Կարապետ Զօմաքանուն անձէն ու իր մօտիկ ազգականներէն: Գանձապետ, ատենապետ, խորհրդական բոլորն ալ Զօմաքեան բարեպտուղներ: Ուստի այս բարեպտոսն առիթէն օգտուելով, Զօմաքեանները կը միաբանին և իրենց . . . քսակին սիրոյն համար տեղոյն եկեղեցիին ու բարեգործական ընկերութեան դրամները 150 հազար ֆրանքէ աւելի կը յատկացնեն:

հեռաւոր ագարակի մը գնման հող մը, որ հեռի է գրամագլուխի համարժէք ըլլալէ:

Բարեբաղդաբար, հակառակ Զօմաքաներու նրբամտութեան, խնդիրը երեւան գալով տեղի տուած է կառավարական քննութեան:

Երանի՜ թէ Պօթուշանի եկեղեցիին դրամները անգարմանելի կեդրով կորսուած չըլլային:

Աւ մարդ կը փորձուի հարցնել թէ, Ռուսմանհայ կարգ մը բարեջան(?) թաղական կամ հոգաբարձուներու կողմէ մինչև ցարդ արդեօք որչափ սոյն օրինակ չահատակութիւններ դործուած ու մութի մէջ մնացած են . . . :

(Այսօրուան քղրաբեր)

Կ. Պուլիս

Ս. Պատրիարքը 350 ոսկինոց լե՛ք մ'ալ յանձնած է Ասլանեան ներսէս եպիսկոպոսին, զոր պիտի գանձէ՛վան հասնելէն ետքը:

— Քիլիպէի հայ գաղթականութեան այս ցերեւ հովիւ Տ. Բարթոլոմէոս վարդապետ Պաղճեան տեղեկագրած է Ս. Պատրիարք Հօր թէ ապրիլ 11ին ժողով կազմելով քաղքին ծանօթ ազգայիններէն, և խորհրդակցութիւն մը ունենալով անոնց հետ, անհրաժեշտ դատուեր է թաղ. խորհուրդի օրինակոր ընտրութիւն կատարել որուն պիտի ձեռնարկուի Զատիկէն անմիջապէս ետքը:

— Պարսկաստանի Սալմաստ քաղաքին Հաւթի վան գիւղի Հայերը, իբր 300 տնտէր հարկադրուել են ռուսադաւանութիւնը ընդունիլ: Զատիկ տօներէն ետքը՝ ռուս եպիսկոպոս մը պիտի երթար մկրտել զանոնք՝ Օրթօտօքս եկեղեցւոյ ծէսերուն համաձայն:

Դաւրէժի հայոց Բարեգործական ընկերութիւնը յիշեալ աղքատ գիւղացիներուն 300 թուանի նպաստ մը զրկել է:

— Միքայել էֆ. Յակոբեան Արմաշի Դըպրեվանքին մէջ դաստիարակող 25 որբերու զգեստ շինելու համար հարկ եղած կերպսը նուիրած է:

— Վանայ կուսակալը բարձրագոյն հրամանի մը համաձայն, սկսեր է արմտիք բաժնել միմիայն սովեալ երկրագործներուն:

Մահ Աղարեան Պատրիարքի

Հայ Հռովմէականաց Տ. Աղարեան Պատրիարքը, որ երկու շաբաթ է ի վեր թորատապէ կը տառապէր, երեքշաբթի գիշեր կընքեր է իր մահանացուն և մարմինը զմատուտով ի տես դրուել է Բերայի Ս. Աստուածածնայ եկեղեցիին մէջ: Յուդարկաւորութիւնը պիտի կատարուի վաղը, կիրակի և նոյն եկեղեցիին շրջափակին մէջ պիտի թաղուի:

Այս առաւօտ Պուլկարական շոգեւանավ Կ. Պոլսէն քաղաքս հասաւ նորապսակ Արժ. Տ. Սարգիս քահանայ Ղարիպեան:

ԽԱՉԱԳՈՂՈՒԹԻՒՆ



EPITROPIE
Arm. Orient.

Սուշօվա 27 Ապրիլ, 99

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

«Պատահաբար լսելով որ մեզ անծանօթ մի անձ Պուլկարից և Ռումանից մէջ

հանգանակութիւն կը կատարէ յանուն Պուս գովինայի հայոց.

Սուշօվայի և Պուսգովինայի հայ եկեղեցեաց Հոգաբարձութիւնս կը փութայ ներկայիս յայտարարել թէ, մեր կողմանէ ոչ ոքին արտօնութիւն տրուած չէ մեր իրաւասութեան տակ գտնուած որ և իցէ եկեղեցւոյ մը շինութեան կամ նորոգութեան և կամ ուրիշ որ և իցէ ազգային հաստատութեան մը անունով հանգանակութիւն կատարել. հետեւաբար այդ անձը ով որ է, խաբէքայ մըն է և իր ներկայացուցած պաշտօնագիրը կեղծ է, եթէ ունի:

Մնամք յարգանք

Ի դիմաց Պուսգովինայի Հայ
եկեղեցեաց Հոգաբարձութեան

ՎԱՐԴԵՐԵՍ Կ. ԲՐՈՒՆԳՈՒԼ

ԿՆԻՔ

(Մենք ստուգեցինք որ սոյն նամակին մէջ յիշուած խաչագողը ասկէ երեք ամիս առաջ Վանան ալ այցելելը և ազգայիններէ հարիւր ֆրանքի չափ դրամ շորթելէ ետքը կորսուելը գացեր է):

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՆՈՐ ՊԱՅԲԱՐ

Յեղափոխական տարւեր տարբեր կուսակցականներ կը գանգատին թէ ոչ յեղափոխականներ զիրենք կը քննադատեն, այդ գանգատը որչափ անիրաւի է, երբ այսօր նոյն իսկ կուսակցութիւնները իրար զիրար կը հարուածեն ու զիմակագուրկ կ'ընեն. միթէ քննադատելու իրաւունքը միայն յեղափոխականներու վերապահուած է. ժողովուրդն ալ աւելի մեծ իրաւունք չունի՞ քննադատելու այն կարգ մը յեղափոխականները՝ որոնք բուն իսկ ժողովուրդին դրամովը կ'ապրին մինչեւ ցայսօր: (Տե՛ս Յաւելուած Դրօշակի Ապրիլ 15, ըրուն անշուշտ պիտի գան պատասխանել Հընչակեան երկու կուսակցութիւնները): Ու խեղճ ժողովուրդը մինակ ատոնց ըսի ըսա՞լ լսելու դատապարտուած է: Աստուած համբերութիւն տայ: Միայն կը մաղթենք որ, արտասահմանեան հայ թերթերը այս ըսի ըսանքներուն չի մասնակցին, նկատելով որ ժողովուրդը զգուած է և զանոնք ձրի չի կարգար օսկան թերթերու պէս:

Նոր Հրատարակութիւն

Մ. 2.

ԹՈԹՈՎԱՄՈՒՆՔ



Գողտրիկ բանաստեղծութեանց սոյն հատորիկը կը վաճառի ի գին 25 պանդիմ, Ա. Զարպհանէլեանի գրատունը, Վառնա :

ԱՂՏՈՏ ԲԱՐՔԵՐ

ԿԱՐԾԵՑԵԱԼ ՍՐԲՈՒՇԻՆ

Հազիւ Պուլկարիա եկած էր, շատերը անոր ունեցած ամբասին կեանքին վրայ նախանձեցան ու կարծեցին թէ բարեպաշտ սրբուհի մ'է :

Քաղաքին մէջ ամեն դասակարգէ անձեր անոր հետ ամենանուրբ բաղաքավարութեամբ կը վարուէին ու կը յարգէին զինքը :

Երիտասարդ դաշնակահարներ, լուսանկարիչներ, դերասաններ, ամաթէօսներ, տաթիսներ, մերսս-ետրտիներ, արհեստաւորներ, չիպաչօսներ, թսան սանգիմնոցներ, ժամկոչներ ու մոմակալներ, ամենքն ալ իրենց արհեստին վերաբերեալ մոռնալի օրհնութիւնները կ'առնէին : Գլ եթէ ասդին անդին չարախօսողները բամբասէին այս հանրածանօթ բարեպաշտուհին, իբրեւ անմեղ կը պաշտպանուէր իրեն արքութեանը համակիր եղող երկու գլխաւոր . . . Տեսնուիմքեան պարոններէն :

Արդէն Հայելիի անցեալ տարւոյ թիւերէն մէկուն մէջ անուղղակի կերպով մատնանիշ ըրած էինք այս կարծեցեալ սրբուհիին համաշխարհային ապաշխարութիւնները, որ իր օրինաւոր ամուսինը թաքելով բաժնուած էր և ինքզինքը նսւիրած էր . . . Եռանկէն և Թաքնա :

Այն ատեն «Հայելին» դատապարտեցին վերեւ յիշուած երկու պարոնները, թէ անիրաւ կերպով զրպարտած էր անմեղ սրբուհի մը, որ ամենուէն յարգանացը իրաւամբ արժանի է եղեր :

Բայց այսօր անգամ մ'ալ ստուգուած է թէ կարծեցեալ սրբուհին ալ ևս ապաշխարանքի ծայրահեղութեան մէջ թաղուեր է, ամուսնանալով . . . Եթէ հի հրեայի մը հետ, (որ ասկէ առաջ 4 կնիկ առած ձգած է եղեր) 1899ի Աւագ երկուշաբթի օրը, 'ի խոր սուգ համակելով խել մը սթաղուած երիտասարդները, և այլն :

Հիմա իսկ իրեն համակիր մէկ քանիներ կաշխատին եղեր զայն հանրութեան իրաւացի նողկանքին դէմ պաշտպանել, ըսելով որ «ամուսնացած չէ», մինչդեռ նոր հրէուհին ճակատաբաց յայտարարած է որ «ինքը ԱՄՈՒՆԱՑԱԾ է հրեայի մը հետ, որ հանգիստաւոր կերպով ուխտեր է իրեն օֆ ըսել չի տալ» . ըսել կըլլայ որ այդ հանգիստաւոր ուխտը եղած է ի ներկայութեան խախտման չիլին՝ որ անշուշտ օրհնած է այս . . . խաժախառն միութիւնը :

Ու մարդ կը սահմակի, մտածելով որ այս աստիճան անկեալ աղտոտ բարք մը՝ քիչ շատ զարգացեալ դասակարգին պատկանող մէկ երկու անձնաւորութիւններէ տակաւին կը պաշտպանուի . . . :

Զատկին Գ. 'Իրիկունը, վառնայի տօնավաճառին մէջ, վարժարանի ուսուցչական մարմինը, քաղաքային, կախօրանի (սալընճագ) նեղ մակոյկներու մէջ դէմ առ դէմ քաջաքիչքի խաղալու ձեւով նստած, հուռուանդով և սուլիչներու ձայներով օրուեցան :

Ականատես Ռուսանող մը.

Զիկոյց . — Հայաշատ քաղաքի մը մէջ կատարուած խղճեցեանքներ (իհարէն՝ պատկազրութիւն) հանգէսի մը նկարագիրը Եր. Զոյր Թեթում :

ԶԱՆԱԶԱՆՔ

Էտրսընի նոր մեկ յաջողութիւնը .

— Յայտնի է որ ամբողջ աշխարհի զարմանք պատճառող Ամերիկեան գիւտերէն առաջինը կը համարուի ժօնօկրաւը, որուն օրէ օր ընդհանրանալովը՝ անոր հեղինակին, Պ. Էտրսընի անունն ալ ամեն տեղ գովեստով կը հռչակուի :

Մեծանուն արուեստագէտը այս անգամ ալ հետեւեալ նոր գիւտը ըրած է . գիւտ մը՝ որ տիեզերքին վրայ գտնուող գիտնականաց ու առաջնակարգ արհեստաւորաց իսկ զարմանք ու ապշութիւն պատճառած է :

Պ. Էտրսըն գրպանի ժամացոյցի մեծութեամբ գործիք մը հնարելու է, որուն մէջ զետեղուած են մէկ վայրկեանի մէջ 200 անգամ դարձող փոքրիկ հայելիներ, այս գործիքը պէտք եղած ժամանակ լարուելով, դիմացի մէկ անձիդ խօսած ատենը ինչ ձեւ ու շարժումներ առնելը հայելիին վրայ կը պատկերացնէ, ասկէց զատ, նոյն անձին խօսակցութիւնը ու ձայնն ալ հայելիին միջոցաւ կարճանագրուի : Գիշեր ատեն երբ սոյն գործիքը լարուելով մութ սենեակի մը մէջ սեղանի մը վրայ դրուի ու բովն ալ ելեքտրական կանգեղ մը վառուի, հայելիներուն վրայ գրծուածները պատին վրայ մարդու մեծութեամբ կերևան, ու այդ ստուերները կը սկսին իրենց բուն տիրոջը ձայնովը խօսիլ :

Այս գիւտին առթիւ նոյն իսկ Ամերիկացիք ներբողականներ սկսած են նուիրել մեծանուն արուեստագէտին :

Այս գործիքին շնորհիւ, այսուհետեւ յանցաւոր մը դատաւարութեան ժամանակ չպիտի կրնայ ուրանալ իր այն առջի խոստովանութիւնը՝ զոր ըրած էր հարցաքննիչ դատաւորին առջև : Հիտակը, սրանչելի՛ բան :

500,000 ժրանֆի սէր աղփաքի մը մահը. — Պէլճիգայի Սէն-Ժիլ քաղաքին մէջ

անցեալները կը մեռնի խիստ աղքատ ճանցուած ծեր մարդ մը, որուն համար պէտք եղած բժիշկն ու դեղերը տեղւոյն աղքատականամբ ընկերութեան կողմէ մինչև վերջը հագացուած էր . թէև ըսողներ կային թէ այդ մարդը հարուստ է, բայց կարեւորութիւն տրուած չէր : Երբ ասկէ ամիս մը առաջ ծերուկը կը մեռնի, անմիջապէս իւր ազգականները բովը կը վազեն ու վրան գլուխը կը խուզարկեն, բայց բան մը չի գտնելնուն վրայ կը տրտմին : Քանի մը օրէն ետքը պէտք կըլլայ անոր սենեակը մաքրել . և ահա անպէտ թուղթերու մէջէն կը գտնուի տետրակ մը, որուն մէջ նշանակուած էր որ հանգուցեալ կծծին Պրուքսէլի պանքանէրէն մէկուն մէջ 500,000 Ֆրանքի հարստութիւն մը ունէր :

Ա՛լ կրնար երևակայել մինչև այն ատեն աղքատ ապրող նոյն խեղճ ազգականներուն ինչ աստիճանի ուրախութիւն զգալը :

40 միլեօն ժրանֆի կեղծ դրամ. —

Գաղիոյ երկիրներէն Ճէզարի Օրան քաղաքին մէջ գրամանենդները այս օրերս իրենց գործառնութիւնները ընդարձակած են : Մինչև հիմա եղած քննութիւնը կը հաստատեն թէ՛ 40 միլեօն արծաթ ֆրանքի կեղծ դրամներ կոխուած են . ասոնց 27 միլիոնը Սպանիոյ մէջ 11 ֆապրիքաներ պատրաստած են : Իսկ Ճէզարի Օրան քաղաքին մէջ այս գործին յատկացեալ 3 ֆապրիքաներ կան եղեր, որոնցմէ 2ը գտնուեր բայց մէկը անկարելի է եղեր գտնել : Մինակ նոյն քաղաքին մէջ 3 միլիոն ֆրանքի կեղծ դրամ չըջաբերութեան հանած են, իսկ մնացեալները ուրիշ երկիրներու ու քաղաքներու մէջ : Հնորհիւ տեղական աշաւուրջ (?) ոստիկանութեան, մարդիկը բաւական գործ տեսնելէ ու բեռերնին կապելէ ետքը ձեռք տուեր են իրենց . . . տետրակները ու պարապ ֆապրիքաները :

Էն նշանաւոր խմանք. — Հարկ է ըսել թէ կը գտնուի Ամերիկայի մէջ, որ տարօրինակութիւններու երկիրն է :

Մուկի կը կոչուի. ծնած, օրէն 'ի վեր քէնդըքի կը բնակի, և հետաքրքրականը սա է որ բժիշկ է: Քսան քաղցեկան հասակէն 'ի վեր Հուսիսքի միայն կը խմէ, ուրկէ օրական 15—20 և նոյն խսկ 25 գաւաթ կը պարպէ:

Այսօր տորգ. Մուկի 70 տարեկան է: Կէս դարու միջոցին իր խմած բոլոր Հուսիսքի գաւաթներուն և շիշերուն ճիշդ հաշիւը ըրած է, ուրկէ կը տեսնուի թէ այս բժիշկ — խմանը 50 տարիի մէջ 315,000 գաւաթ — մեր ջուրի գաւաթներուն մեծութեամբ հուսիսքի խմած է, որ ըսել է 75 թօնօ ըմպելի, այսինքն 150,000 Փր. 'ի ահագին ծախք մը: Շիտակը, սա տօքթօր Մուկի ըսուածը մարդ չէ այլ. . տակա՞ն մը:

ՁԻ ԳՏԱՅ

Ձիս ըստակիս համար սիրող շատ ունիմ. Բայց զիս ինձ համար սիրող մը չի գտայ. Առ երեստ հազար մեռնողներ ունիմ, Թէեւ իրապէս մարող մը չի գտայ:

Յաջողութեանց մէջ միշտ կաղն 'ի կաղ էի, Անոր համար կեանքիս հետ ալ պաղ էի. Օր մ'ալ ես զիս ողջ ողջ պիտի թաղէի, Չրի գերեզման մը փորող չի գտայ:

Մէկ տարուան մէջ չորս հեղ զիս ըրին փեսայ, Իրաւոր ես հարսի երես չի տեսայ, Սուտն իրաւին խօսող օրերու հասայ, Ճշմարտութեան ոգւոյն յարող չի գտայ:

Մըտահաճութիւնը բան գործ է եղեր, Արհեստաւորն ալ իւր գործէն է պաղեր, Բաղդախնգիրը խաղան զանազան խաղեր, Մեղկութեան ախտին դեղ ճարող չի գտայ:

Այլոց պէս մենք ալ ունինք շատ դպրոց, Իմաստուն, լեզուագէտ, վարժիչներ հո՛ւր բո՛ց. Ծըրպօղի պատրաստեն միշտ աչքերին գոց, Բայց ես ծաղկող մ'անգամ վարող չի գտայ:

Իրաւ է որ այդպէ կառնեն չար դասեր, Բայց կատարելութեան ո՞ր մէկն է հասեր, Ոտքերնուն տակ պատրաստ խեղճութեան փոսեր, Դեռ ապրուստի ճարն հնարող չի գտայ:

Քու պօնժուող շուկան քանի՞ կառնեն, 'նայէ՛ որ բաճկոնը կըռնակէ՜ չառնեն. Ըսպասէ՛ գործ գտնած, մինչ մեռեալք յառնեն, Իր պորտն իր ձեռքով կըտրող չի գտայ:

Ամեն ազգ ամեն տեղ ունի իր մօտան, Բայց ոչ որ մեզի պէս փորձաքնին գտան, Պարկեշտութիւնն հարկաւ ունի մէկ սահման, Ես պարելու մտօք պարող չի գտայ:

Խնձորներու մէջ մայրերն աղջկանց, Հսկողութեան պաշտօնն շատ հեղ կառնեն զանց, Տղայք սէ՛ր նուիրեն աղջկանց գերապանծ, Բայց սուրբ սիրով սիրահարող չի գտայ:

Ամուսնութեան պահանջն սէ՛ր է, ոչ տուփանք, Առանց սիրոյ պսակ՝ կեանքն առնէ տուգանք, Հարսնիքի տուն գինով մարդիկ շատ տեսանք, Պսակի խորհուրդը խորհող չի գտայ:

Սուրբ, իմաստալից և հատընտիր բանք, Կարտասանուին շատ հեղ իբր բարբանջանք, Գործն անուշին կապել տէրտէրին տենջանք, Ժողովուրդը ոգեւորող չի գտայ:

Ասոնք ալ ընթացքնին հիմա փոխեցին, Խոհեմութեան քողը պատէն կախեցին, «Բարի արարէք»ը մեզի ծախեցին, Բայց իւր հարազատին ներող չի գտայ:

Այս ամենքը յոռի կենաց առիթ տան, Ծերք կը տխրին, իսկ նորեկները կը խայտան, Բազոսեանք որդեգիր եղան գինետան, Բարի վարքը բաջալերող չի գտայ:

Ըսելիք շատ բան կայ, սակայն ինչ ընեմ, Գըրէչս կոտրեցաւ, ուրիշ մը առնեմ, Ա՛լ բաւական է, ձայնս մեծի բռնեմ, Ճշմարտախօսը սիրող մէկը 2Ի ԳՏԱՅ:

ՄԵՌԵԼՈՅԻ ԱՌԹԻԻ

Զտակին երկրորդ օրը, ըստ հնա-
ւանդ սովորութեան, տեղւոյս ազգային
գերեզմանատունն ալ երկսեռ բազմո-
թեամբ լեցուած էր, որոնք Մեռելոցի
առթիւ իրենց ննջեցելոց գերեզմաննե-
րը օրհնել տալու եկած էին: Եւ որով-
հետեւ ընդ ամենը մէկ քահանայ կար,
որ ստիպուած էր քանի մը նշանաւոր
գերեզմանները ութնական կամ տաս-
նական անգամ օրհնելու, ուստի ասդին
ժամերով սպասող արք և կանայք ըս-
կան տրանջալ:

— Քա քուրուկ, տա պզտիկ ծա-
ռին քովի գերեզմանը պէլքի օխտը հեղ
օրհնել տուին. աճապա որո՞ւն գերեզ-
մանն է:

— Մինակ անիկա չէ. լէյլաքի ծա-
ռին տակի գերեզմանն ալ թամ հինգ
հեղ օրհնեց:

— Աս ալ աս տարուան մօտան է
զահէր. տունը գործ մը ունիս, բա՞ն մը
ունիս, ձգեր եկեր սահաթներով կը պէք-
լէյէս. սա խալապալըխին նայինք նէ՛
վախնամ չպիտի կրնանք մեռելնիս օրհ-
նել տալ:

— Կայնէ նայինք, տէրտէրը լը-
մենցուց, դէպ ՚ի հոս կուգայ կոր...
այ, նորէն դարձուցին... քա ան ի՞նչ
է, կէնէ ան գերեզմանը օրհնել պաշ-
լայեց:

— Ծօ՛ ճանըմ նշան, դնա՛ հաս-
կըցիր նայէ՛, ի՞նչ բան է ասիկայ:

— Քուրուկ, խապահաթը տէրտէ-
րինն է, մէյ մը օրհնածը ինչո՞ւ մէյ մը
ալ կօրհնէ կոր:

— Տէրտէրը ի՞նչ ընէ, մեռելին
տէրը մեթօզօռի «բարայովս չէ՞» մի, ես
ալ պիտի օրհնել տամ և կըսէ տէրտէրին
եախան չի ձգեր կոր:

— Էյ աս գերեզմանը որի՞նն է,
դնա՛ հասկցիր քի պարէ մէռաքէ ասա-
տինջ:

— Ի՞նչը պիտի հասկնամ, ես դի-
տեմ:

— Մեղի ալ ըսէ՛:

— Մէկը թէյզէիս աղջիկն է ը-
սելով օրհնել կուտայ կոր, մէկը հալա-
յիս աղջիկն է կըսէ կոր, մէկը նշանա-
ծս է կըսէ կոր, մէկը պիտի կարգուէի
հետը կըսէ կոր, մէկը գրացինիս աղ-
ջիկն էր կըսէ կոր, մէկը բէք սըխը մու-
հապէթի էինք կըսէ կոր, մէկն ալ բէք
աղւոր կը տեսնուէինք կըսէ կոր, հասը-
լը՝ վրայ հասնողը չեմ գիտեր ինչ է ը-
սելով խաթմէրի սօյէն օրհնել կուտայ
կոր:

— Տէր ողորմեա, տէր ողորմեա,
աս ալ չէի իմացեր, ծօ ճանըմ նշան,
ամենը մէկ ըլլան տէ բերան մը օրհ-
նել տան նէ չըլլա՞ր:

— Գէսպէլի չըլլար եղբեր բաղնիք
երթանք նէ մէկ բերան լուացելով կըլ-
լա՞նք. անոնց ալ մեղքերը շատ ըլլա-
լու է:

— Աստուծոյ աչքին մեռնիմ, քու-
րուկ, մեռեր գացեր են, գերեզմանին
մէջը պիլէ իրենց վրայ տուզինաներով
հոգացողներ ունին. ասդին ողջեր կան
քի՛ մտմտացող մը չունին:

— Աս հիսապով, մենք չպիտի կըր-
նանք մեռելնիս օրհնել տալ, իրիկուն
չեղած ելլանք տեղերնիս իյանք:

— Օլտու օլաճագ, քիչ մ'ալ պէք-
լէյենք:

— Բան չունիս նէ՛ պէլլէյէ. ասանկ
5—10 հեղ օրհնուելիք 10—20 գերեզ-
ման տահա ըլլայ տէ տէրտէրը մէյմէկ
«հոգոց» կարգայ նէ՛ հիսապ չիյտեմ ա-
մա վեց օխտը հարուր հոգոց կընէ, օ-
րըն ալ իրիկուն կըլլայ:

— Երտակ է քուրուկ, մարդը ո՞ր
մէկին պիտի հասնի:

Հաղիւ թէ այս խօսքերը արտասա-
ներ էին, ահա իրարանցում մը տեղի
ունեցաւ ու իմացուեցաւ որ տէր պա-
պան մարեր է:

— Եւ ի՞նչ ցուխտեանն ամէն,
տե՛ղաք հիւսիս, մարգարէն նէ՛քէս տանեա

լու պիլէ վախիթ չեն ձգեր կոր. հայտէ քալեցէք տեղերնիս երթանք, հասկըցանք, գերեզման չպիտի կրնանք օրհնել տալ:

— Բա ճանրմ հապա ինչո՞ւ եկանք:

— Բուրուկ ասանկ ըլլալիքէն խապար էինք. խոտովանանք մնայ, գիտես քի՛ 40 տարի միշտին մէջ լողացողին գերեզմանը ասխտար օրհնել տալով հէմէն բիրիբաք պիտի ընեն արքայութիւն ղրկեն:

— Անանկ է նէ հայտէ քալեցէք, պաշխա օր մը կուգանք, ըսելով մեկնեցան:

ԲԱՌԱՅԱՆՈՒԹԻՒՆ

Ես ամենէն վեր

կընտրեմ որոշ գին

Քեզ համար վերգին:

Ընտանեաց ու տան

Տրուած ամեն ջանք

Է՛ համես տանջանք:

Լի գուրկոս մը կար

Նախ քան . . . դար

Օրէնք կը կարգար:

Բեր մեզ հոգ ու կիր

Որ շինենք ակոս

Եղբայր կիրակոս:

Դառնութեանց մէջ համ

Թէ կուգես բերել

Պէտք է համբերել:

Ինձ զրկած գրաւ

Իսկապէս լաւ էր

Զիս կը գրաւէր:

Բերաւ բառգիրք մի

Բայց ասաց ինձ թէ

Ետ կա՞նէ միթէ:

Շուտ իրմէն առ՝ ու

Շահով մէկին տուր

Լինի առուտուր:

Ես կըսեմ գրէ

Իսկ դու ըսէ թէ

Մոռոյ գրէթէ:

Կըտակ կընեմ որ

Թէ մեռնիմ իմ դիս

Թող թողէ որդիս:

Ռուսճուր

ՄԵՒԱՅՈՒՆ

ԳԱՐ—ԳԱԶ ՊԻՐ ԱՎՕԳԱԹ

(Կեյեմ Ախսիսէսէն)

— Էյ սիմտի նասին օլմիս պիղիմ իսի:

— Սիզին իշ պիթմիշ կիպի տիր, եալընըղ իլամըն նագսը գալմըշ, օտա իքի կիւնտէն պիթէր:

— Եա պու Ղուրդուլտի ալուգաթօ պանա սէօվլէր քի, պու տալա գայպի օլմիս:

— Հալթ էթմիշ էֆէնտիմ, պու նէյէ պէնղէր պիլիրսի՞ն, պիր ատամ քի իլմի ֆըգ օգուճազ գանօն աղնամաղ շալգար պիր տալանեա մուպաշըրէթ էտիպ, տալանըն էսասընը պիլմէտէն մուհաֆազա էտէր. ֆագաթ իշթէ Մէճէլէտէ կէօսթէրիր. աղնատը՞ն մը:

— Հաճան աղնամամ, պրէ գարտաս նէ՞ սէօվլէյիմ:

— Դօրգամ գուղում գօրգամ, սէն կիթ րահաթ ույգունու ուեու, պու տալալը էվէէլ Ալլահ գաղանմըշըմ. պանա Մ. ապուգաթ տէրլէր. պիլլիօրմուսըն...

— Մա պիլլիրիմ քէ ուսթա ալօգաթօ, օնուն իճին, ըօլի սէբարագալօ պու իսի էյի պագասի:

— Պագայէսի եօգ գօրգամ պապամ, իլամ չըգար չըգմազ վէրտիկին պին լիւրայը ալըրըղ, ֆըշըլարա ասլա էլ վուրմանասըն, էօյլէճէ գալսըն:

— Աղնամիսիմ, վուվու տէն իմէ, էհ սիմտիլիք ատիօ:

— Ուղուրլար օլսուն, սէֆա կէլտինիզ տէյէրէք, եաղ թիւճճարընը եօլա գօր:

Եաղ թիւճճարը միւսիւ Նիգօլաքի օտատան տըշարը չըգար չըգմազ պիլիմ դարգաշ ալօգաթ արգատաշընա խիթապէն:

— Եահու, գանն իտէրսէմ մէվգիի տէյիշտիրմէնին վագթը կէլտի:

— Պէն պաշգա պիր իշ տիւշիւնտիւմ, էօյլէ պիր իշ քի, նէ գաղասը վար նէ պէլասը:

— Նասըլ . . . :

— Պունտան պէտքէ հէր կիւն թի-
ճարէթ մահքէմէլէրինտէ պուլունուրուզ:

— Եւ ետրաճաղըզ օրտա:

— Կէօրիւլէն տավալարը տիյնէ-
րիզ:

— Պէնիմ իչին տէյիլ:

— Տիյնէ, կէօրիւլէն տավալարը
տիյնէրիզ, եիւքիւ պիւր տավա պուլ-
տուղումուզ կիպի տավա սահիպլէրինին
մահալը իգամէթլէրինի էօյրէնիւրիզ:

— Էյ սօղրա:

— Պէն պիւրինէ կիտէրիմ, աէնտէ
տիկէրինէ, տէրիզ քի սէնին ֆիլանճա
իլէ պիւր տավան վար, պէն պու տավա-
նը գազանտըրըրըմ, մէսէլա տավասը-
նա կէօրէ 50 եախօտ 100 լիւրա ալըրըմ:

— Հէրիֆ վէրիւր մի:

— Պէնտէ փարայը պանա վէր տէ-
մէմ, քէնտի թանըտըզլարընտան միւ-
թէպէր պիւրինին եանընա տէրօղիթօ
էթսին, տավասընը նէ վագըթ գազա-
նըրսա օ վագըթ վէրսին:

— Էյ նաւըլ գազանտըրաճագսըն
տավասընը:

— Իսթէր գազանսըն իսթէր զայպ
իթսին, սէն տիյնէ տէ պագ, օ պիւր թա-
րաֆա տա սէն կիտէր պէնիմ եափտը-
ղըմըն այնըսընը եափարսըն, իքի թա-
րաֆտան պիւրի էլպէթ տավայը գազա-
նաճագ, գազանանտան տէրօղիթօ օլան
բարայը ալըրըզ:

— Պունու բէք կիւզէլ տիւչիւնաիւն,
նէ սուեա տօգունուր տէ սապունա, հաթ-
թա պանա գալըրսա պիւր սաաթ էվվէլ
պաշլաեալըմ պու իչէ:

— Օտապաշը տույմատան հէլէ ու-
ֆագ թէֆէյի թաշըյալըմ օտաւտան:

— Ատամ սէնտէ տէօրթ սանտալիէ
իլէ պիւր մաւանըն լաֆը մը օլուր:

— Պունլար օտայը գաբայըպ գաշմագ
իւզրէ իքէն պիւր Դարամանլը իչէրի
կիրտի:

— Զապահըն զալիմէրասա, տավա
վէքիլի վարըմըզ, եաղըլմաղրամ պու-
րա զէրէք:

— Էվվէթ էֆէնտիմ, պուրասը:

— Հէլէ պիւր խայֆէ սըմարլա զէ-
րէ եօրուլտու մ, սանղա իչի աղնաթայըմ:

— Պաշ իւսթիւնէ, պիւր գահվէ
սէօյլէ:

— Պիլիմ աւաա Բօլիտրօմօղլա շէ-
րիւ օլտույուտուլս, պին օգղա զաշէր
մալըմըզ վար տա բիյաճայը զըրըն
վէօրիւնճէ զաշմէրլիք իտիպ պէն օրթաղ
տէյիլին տիյօր:

— Աղնաարմ, շիւրէքեատէն ֆիլը
լսուրուճ էտլիօր:

— Եօլս զարտաշ, էօյլէ ֆիլէկէվիշ
ղէթիւրէն եօղ, տիւզճէսինէ նէ տէյօն
պիլիյօնղը, վար կէթ պիւրիղինի կէօր
տէյօր:

— Էֆէնտիմ, պուրնա ճէտվէլ գա-
լէմ պիւր իսթիտա բարլաթմալը:

(Տէկաւի)

ԹՕՄԹՕՄ



ԳՈՒՀԱԿ

Ա. Պ. Ս. Գ. Ա. Յ. Ի

Կամ Զուարճալի Բաղդադոյ
ընտանեկան

Երկեսն ամէն հասակի ընթերցողաց ըզ-
բօսալի ժամանցներ տուող սոյն գիրքը կը
ծախուի մէկ ֆրանքի, թղթատարի ծախքով,
գիմել խմբագրութեան:

ԸՆԴԱՐՁԱԿ

ՈՐ ԿՆԱՐ ՀԱՅԱԿԱՆ

Կամ Հաւաքածոյ

Հին եւ նոր Ազգ. երգերու

208 էջերէ բաղկացած սոյն

երգարանը կը ծախուի

Վառնա Ա. Զարպանէլեանի գրատունը:
Դինն է 2 ֆր. թղթատարի ծախքը գը-
րատան վրայ բլալով: Դրամի փոխարէն
կընդունուի Պուկարական Գաղ. Գերմ.
Անգլ. և Թրքական չի գործածուած նա-
մակադրոշմներ:

12